ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

«04» նոյեմբերի 2011թվական
ք. Գյումրի

## *ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ*

*ՎԱՐՈՒՄ ԷՐ՝* Գյումրու քաղաքային համայնքի ղեկավար ***Վ.Կ.Ղուկասյանը***

*ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝* Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար ***Բ.Վ.Ալեքսանովը***

*ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝* Գյումրու քաղաքային համայնքի ավագանու անդամներ՝

*Հ.Պողոսյանը, Գ.Առաքելյանը, Ա.Բաղրամյանը,*

*Տ.Փանոսյանը, Թ.Համբարձումյանը, Չ.Զարգարյանը,*

*Վ.Կիրակոսյանը, Մ.Սահակյանը,*

*ՀՐԱՎԻՐՎԱԾ ԷԻՆ՝*

*Գ.Մանուկյանը - համայնքի ղեկավարի տեղակալ*

*Մ.Գրիգորյանը - աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստ*

*Հովհ.Գրքիկյան - աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ*

*Ռ.Հակոբջանյանը - աշխատակազմի քաղաքաշինության, շինարարության և անշարժ գույքի կադաստրի բաժնի պետ*

*Հ.Գասպարյանը - աշխատակազմի ճարտարապետական բաժնի պետ - գլխավոր ճարտարապետ*

*Ա.Կարապետյանը - աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ*

*Ց.Չաղրյանը - աշխատակազմի ծրագրերի, տեղեկատվության և վերլուծության բաժնի պետ*

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՕՐԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

1. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

2. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

3. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՀՈ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

4. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

5. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի «ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » N 118-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2008ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 4 ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

7. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ ՓՈՂՈՑԻ N 84 ՀԱՍՑԵԻ 461.27ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ԵՎ 175.41ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՀԵՍՏԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

8. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ ՓՈՂՈՑԻ N 84/1 ՀԱՍՑԵԻ 78.56ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

9. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Հ.Գասպարյան)

10. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 49 ՇԵՆՔԻ 1-ԻՆ ՀԱՐԿԻ 61.96 Ք.Մ. ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲԱՑՎԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ց. Չաղըյան)

11. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ՝ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

12. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՏԵՂԱՇԱՐԺ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Մ.Գրիգորյան)

13. «ՀԱՅԱՍՏԱՆ » ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Մ.Գրիգորյան

14. ԳՅՈՒՄՐՈՒ «ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ » ՀՈԱԿ-ԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱԿՏԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Մ.Գրիգորյան)

15. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՊԱՐԻ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Մ.Գրիգորյան)

16. ԺԻԼԲԵՐՏ ՄԱՆՎԵԼՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Մ.Գրիգորյան)

17. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 18 ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Մ.Գրիգորյան)

## ՕՐԱԿԱՐԳ ԵՆ ՄՏԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԹՎՈՎ 6 ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՐՑԵՐԸ

1. «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

2. ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Մ.ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻ N 33/11 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

3. «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ-ԻՆ ԱԼԵՀԱՎԱՔ ԱՇՏԱՐԱԿՆԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

4. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԶԻԼ ՄՄԶ-4502» ՄԱԿՆԻՇԻ ԲԵՌՆԱՏԱՐ ԻՆՔՆԱԹԱՓ ՄԵՔԵՆԱՅԻ ԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ.Հովհ.Գրքիկյան)

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏՈՒՀԻ ՖԼՈՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏՎԱՎՈՐ «ՎԱՐՊԵՏ» ՈՍԿՅԱ ԿՐԾՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ա.Կարապետյան)

6. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Բ.Ալեքսանով)

## ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Է ՕՐԱԿԱՐԳԸ 23 ՀԱՐՑՈՎ

1. ԱճՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱճՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

2. ԱճՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱճՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

3. ԱճՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՀՈ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱճՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

4. ԱճՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱճՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

5. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի «ԱճՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱճՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » N 118-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2008ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 4 ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ճԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

7. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ ՓՈՂՈՑԻ N 84 ՀԱՍՑԵԻ 461.27ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ԵՎ 175.41ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՀԵՍՏԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

8. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ ՓՈՂՈՑԻ N 84/1 ՀԱՍՑԵԻ 78.56ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

9. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Հ.Գասպարյան)

10. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 49 ՇԵՆՔԻ 1-ԻՆ ՀԱՐԿԻ 61.96 Ք.Մ. ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲԱՑՎԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Յ. Չաղըրյան)

11. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ՝ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

12. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՏԵՂԱՇԱՐԺ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Մ.Գրիգորյան)

13. «ՀԱՅԱՍՏԱՆ » ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Մ.Գրիգորյան

14. ԳՅՈՒՄՐՈՒ «ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ » ՀՈԱԿ-ԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱԿՏԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Մ.Գրիգորյան)

15. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՊԱՐԻ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Մ.Գրիգորյան)

16. ԺԻԼԲԵՐՏ ՄԱՆՎԵԼՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Մ.Գրիգորյան)

17. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 18 ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Մ.Գրիգորյան)

18. «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

19. ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Մ.ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻ N 33/11 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

20. «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ-ԻՆ ԱԼԵՀԱՎԱՔ ԱՇՏԱՐԱԿՆԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ.Ռ.Հակոբջանյան)

21. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԶԻԼ ՄՄԶ-4502» ՄԱԿՆԻՇԻ ԲԵՌՆԱՏԱՐ ԻՆՔՆԱԹԱՓ ՄԵՔԵՆԱՅԻ ԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱԿՏԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ.Հովհ.Գրքիկյան)

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏՈՒՀԻ ՖԼՈՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏՎԱՎՈՐ «ՎԱՐՊԵՏ» ՈՍԿՅԱ ԿՐԾՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ա.Կարապետյան)

23. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Բ.Ալեքսանով)

*Լ Ս Ե Ց Ի Ն՝*

### *1. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

***Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Գյումրու քաղաքապետի **2011թվականի հոկտեմբերի 26-ի** «Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդային կարգով օտարելու համար հողամասեր առանձնացնելու մասին» **N 4289-Ա** որոշմամբ առաջարկված հողամասերի մեկնարկային գները՝

*Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Է՝*

Հաստատել՝ Գյումրու քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերի աճուրդային կարգով օտարելու նպատակով մեկնարկային գների ցուցակը՝ համաձայն հավելվածի:

***ԿՈՂՄ – միաձայն***
***ԴԵՄ –***

### *2. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

***Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Գյումրու քաղաքապետի **2011թվականի հոկտեմբերի 26-ի** «Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդային կարգով օտարելու համար հողամասեր առանձնացնելու մասին» **N 4290-Ա** որոշմամբ առաջարկված հողամասերի մեկնարկային գները՝

*Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Է՝*

Հաստատել՝ Գյումրու քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերի աճուրդային կարգով օտարելու նպատակով մեկնարկային գների ցուցակը՝ համաձայն հավելվածի:

***ԿՈՂՄ – միաձայն***
***ԴԵՄ –***

### *3. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՀՈ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

***Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Գյումրու քաղաքապետի **2011թվականի հոկտեմբերի 26-ի** «Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդային կարգով օտարելու համար հողամասեր առանձնացնելու մասին» **N 4291-Ա** որոշմամբ առաջարկված հողամասերի մեկնարկային գները՝

*Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Է՝*

Հաստատել՝ Գյումրու քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերի աճուրդային կարգով օտարելու նպատակով մեկնարկային գների ցուցակը՝ համաձայն հավելվածի:

***ԿՈՂՄ – միաձայն***
***ԴԵՄ –***

### *4. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

---

***Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Գյումրու քաղաքապետի **2011թվականի նոյեմբերի 1-ի** «Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդային կարգով օտարելու համար հողամասեր առանձնացնելու մասին» **N 4369-Ա** որոշմամբ առաջարկված հողամասերի մեկնարկային գները՝

*Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Է՝*

Հաստատել՝ Գյումրու քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերի աճուրդային կարգով օտարելու նպատակով մեկնարկային գների ցուցակը՝ համաձայն հավելվածի:

***ԿՈՂՄ – միաձայն***
***ԴԵՄ –***

### *5. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի «ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » N 118-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

---

***Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան***

Գյումրու քաղաքային համայնքի ավագանու **2011թվականի հուլիսի 20-ի** «Աճուրդով օտարելու նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը առանձնացնելու և աճուրդի մեկնարկային գներ հաստատելու մասին» **N 118-Ա** որոշմամբ հաստատված ցուցակի 20-րդ տողով հաստատվել է **Գ.Նժդեհի փողոցի** N 5/11 հասցեի **666.20**քառ.մ առանձնացված հողամասի մեկնարկային գինը՝ **2 665 000 (երկու միլիոն վեց հարյուր վաթսունհինգ հազար)** ՀՀ դրամ:

Հողամասի աճուրդով օտարման հայտարարությունը տրվել է մեկ անգամ և հայտ չներկայացնելու պատճառով չի կայացել (**2011թվականի սեպտեմբերի 26-ի N 63 արձանագրություն**):

Ընդունելով աճուրդային հանձնաժողովի **2011թվականի սեպտեմբերի 26-ի N 63/1** արձանագրությամբ ներկայացված առաջարկությունը, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 69-րդ հոդվածի 1-ին կետի, 68-րդ հոդվածի 7-րդ կետի 2-րդ պարբերության, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին կետի՝

*Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Է՝*

Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2011թվականի հուլիսի 20-ի «Աճուրդով օտարելու նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը առանձնացնելու և աճուրդի մեկնարկային գներ հաստատելու մասին» N 118-Ա որոշմամբ հաստատված ցուցակի 20-րդ կետն ամբողջությամբ շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 20 | Գ.Նժդեհի փող. 5/11 9-րդ զոտի | ԱՀ11-0163 666.20 | բնակավայրերի հասարակական կառուցապատում | բարեկարգում իրականացնելու նպատակով | 2 100 000 երկու միլիոն հարյուր հազար |

*ԿՈՂՄ – միաձայն*
*ԴԵՄ –*

## *6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2008ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 4 ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2008թվականի նոյեմբերի 17-ի N 4 և 2011թվականի մարտի 10-ի N 40-Ա որոշումներով թույլատրվել է Ռուսթավելի փողոցի N 84 հասցեի շինությունը օտարելու աճուրդով, սակայն 2008 և 2009թվականներին չորս անգամ հայտարարված աճուրդները (արձանագրություններ NN 6; 3; 5; 8) չեն կայացել, որից հետո 2011թվականին՝ ելնելով շինության տեխնիկական վիճակից, կատարվել է նոր գնահատում և երկու անգամ դրվել է աճուրդի և նորից ոչ մի գնորդ չի ներկայացել (2011թվականի ապրիլի 13-ի N11 և 2011թվականի հունիսի 10-ի N20 արձանագրություններ): Նկատի ունենալով վերը նշվածը և հաշվի առնելով շինության պահպանումն ապահովելու խնդիրը, այն բաժանվել է երկու մասի, որպեսզի հնարավոր լինի այն վերականգնելու համար ընդգրկել տարբեր ներդնողների:

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի 1-ին կետի՝

*Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Է՝*

Չեղյալ ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2008թվականի նոյեմբերի 17-ի «Ռուսթավելի փողոցի N 84 հասցեի 715.24քմ ընդհանուր մակերեսով շինության օտարման մասին» N4 որոշումը:

*ԿՈՂՄ – միաձայն*
*ԴԵՄ –*

## *7. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ ՓՈՂՈՑԻ N 84 ՀԱՍՑԵԻ 461.27ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԵՎ 175.41ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՀԵՍՏԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան*

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցանկում ընդգրկված Ռուսթավելի փողոցի N 84 հասցեի 461.27քմ մակերեսով գլխավոր մասնաշենքը և 175.41քմ պահեստը (սեփականության վկայական 2843053) 1988թվականի երկրաշարժից հետո իրենց նպատակին չեն օգտագործվել և հետերկրաշարժյան տարիներին, ժամանակի հետ կապված, շարքից դուրս են եկել շինության ծածկերը, հատակները, կտուրը, ներքին հարդարումն ամբողջությամբ և շինության հիմնանորոգման և ուժեղացման համար պահանջվում են զգալի ֆինանսական ներդրումներ, որի հնարավորությունը տեղական բյուջեն չունի: Հաշվի առնելով շինության պահպանումը ապահովելու խնդիրը, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի՝

*Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Է՝*

1. Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող Ռուսթավելի փողոցի N 84 հասցեի 461.27քմ մակերեսով գլխավոր մասնաշենքը և 175.41քմ պահեստն իրենց զբաղեցրած 1614.07քմ հողամասով օտարել աճուրդային եղանակով:
2. Ելնելով «Գազեմա» ՍՊԸ-ի կողմից **2011թվականի հոկտեմբերի 25-ի N 82** հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից 461.27քմ մակերեսով գլխավոր մասնաշենքի և 175.41քմ պահեստի համար օտարման մեկնարկային գին սահմանել **4319000 /չորս միլիոն երեք հարյուր տասնինը հազար/** դրամ, իսկ 1614.07քմ հողամասի համար՝ **12396000 /տասներկու միլիոն երեք հարյուր իննսունվեց հազար/** դրամ:
3. Շինության հիմնանորոգմանը և ժամկետներին ներկայացվող պահանջները, որպես պատմության և մշակույթի հուշարձանի, մանրամասնել առուծախի պայմանագրում:
4. Շինության օտարման մասին, աճուրդ-վաճառքը կայանալուց հետո, սահմանված կարգով իրազեկել հուշարձանների պահպանության պետական լիազորված մարմնին:
5. Շինության առուվաճառքի հետ կապված ծախսերը կատարել գնորդի հաշվին:

*ԿՈՂՄ – միաձայն*

*ԴԵՄ –*

### *8. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ ՓՈՂՈՑԻ N 84/1 ՀԱՍՑԵԻ 78.56ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան*

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցանկում ընդգրկված Ռուսթավելի փողոցի N 84/1 հասցեի 78.56քմ մակերեսով գլխավոր մասնաշենքը (սեփականության վկայական 2843054) 1988թվականի երկրաշարժից հետո իր նպատակին չի օգտագործվել և հետերկրաշարժյան տարիներին, ժամանակի հետ կապված, շարքից դուրս են եկել շինության ծածկերը, հատակները, կտուրը, ներքին հարդարումն ամբողջությամբ և շինության հիմնանորոգման և ուժեղացման համար պահանջվում է զգալի ֆինանսական ներդրումներ, որի հնարավորությունը տեղական բյուջեն չունի: Հաշվի առնելով շինության պահպանումը ապահովելու խնդիրը, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի՝

### *Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝*

1. Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող Ռուսթավելի փողոցի N 84/1 հասցեի 78.56քմ մակերեսով գլխավոր մասնաշենքը հողամասով օտարել աճուրդային եղանակով:
2. Ելնելով «Գազեմա» ՍՊԸ-ի կողմից **2011թվականի հոկտեմբերի 25-ի N 83** հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից 78.56քմ մակերեսով գլխավոր մասնաշենքի օտարման մեկնարկային գին սահմանել **2895000 /երկու միլիոն ութ հարյուր իննսունհինգ հազար/** դրամ, իսկ 160.78քմ հողամասի համար՝ **1235000 /մեկ միլիոն երկու հարյուր երեսունհինգ հազար/** դրամ:
3. Շինության հիմնանորոգմանը և ժամկետներին ներկայացվող պահանջները, որպես պատմության և մշակույթի հուշարձանի, մանրամասնել առուծախի պայմանագրում:
4. Շինության օտարման մասին, աճուրդ-վաճառքը կայանալուց հետո, սահմանված կարգով իրազեկել հուշարձանների պահպանության պետական լիազորված մարմնին:
5. Շինության առուվաճառքի հետ կապված ծախսերը կատարել գնորդի հաշվին:

*ԿՈՂՄ – միաձայն*

*ԴԵՄ –*

### *9. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Հ.Գասպարյան, Վ.Ղուկասյան*

Գյումրու համայնքը Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» N 731-Ն որոշմամբ սահմանված կարգով ներքոհիշյալ շինությունների նկատմամբ ձեռք է բերել սեփականության իրավունք, որոնք ենթարկվել են պետական գրանցման:

Նկատի ունենալով, որ նշված շինությունների նկատմամբ պետք է կիրառվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման պահանջները՝ շինությունները ուղղակի վաճառքի միջոցով օտարվելու են տվյալ շինությունները կառուցողներին՝

*Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝*

1. Թույլատրել ուղղակի վաճառքի միջոցով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող շինությունները /հողամասերը/ տվյալ շինությունները կառուցողներին՝ ցուցակը համաձայն հավելվածի:
2. Շինությունների և հողամասերի օտարման գները սահմանել համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ սահմանված գների:

***ԿՈՂՄ – միաձայն***
***ԴԵՄ –***

### *10. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 49 ՇԵՆՔԻ 1-ԻՆ ՀԱՐԿԻ 61.96 Ք.Մ. ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲԱՑՎԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

***Տ.Չաղըյան, Վ.Ղուկասյան***

«Լուսաղբյուր» Հասարակական Կազմակերպության նախագահ Սուրեն Զաքարյանը դիմել է Գյումրու քաղաքապետին /2011թվականի հոկտեմբերի 20-ի թիվ Գ-1914 դիմումով/ գույքի վարձակալության պայմանագիրը մեկ տարի ժամկետով երկարաձգելու և նոր պայմանագիր կնքելու խնդրանքով /սեփականության վկայական 1139360/:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝

*Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝*

1. Թույլատրել Գյումրու համայնքի գույք հանդիսացող Ղանդիլյան փողոցի Թիվ 49 շենքի 1-ին հարկի 61.96 ք.մ. մակերեսով բացվածքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել մեկ տարի ժամանակով:
2. Վարձավճարի գին սահմանել տարեկան 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ:
3. Հանձնարարել բյուջեի եկամուտների հաշվառման բաժնին կնքելու գույքի վարձակալության պայմանագիր:
4. Վարձակալության պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման ծախսերը կատարել վարձակալի հաշվին:

***ԿՈՂՄ – միաձայն***
***ԴԵՄ –***

### *11. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ՝ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

***Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան***

Վերջին տասը տարիների ընթացքում Գյումրիում 1988թվականի երկրաշարժի հետևանքների վերացման և քաղաքաշինական միջավայրի վերականգնման խնդիրը հիմնականում լուծվում է ոչ պետական ներդրումների ներգրավմամբ:

Վերջին տարիներին քաղաքաշինական պահանջների ապահովմամբ կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերի տրամադրումը խոչընդոտվում է հողամասերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման պահանջներով:

Հարցը կապված է այն հանգամանքի հետ, որ երկրաշարժից հետո անօթևան ընտանիքների կողմից կառուցված ժամանակավոր կացարանները, տնակային կառուցվածքներն, անկազմակերպ տեղադրված պարիսպները և օժանդակ շինությունններն առ այսօր պահպանվել են քաղաքի տարածքում:

Տարածքներում առկա են նաև բնակարան ստանալու գործընթացներով պայմանավորված քանդվող և քանդված ժամանակավոր շինությունների հիմքեր, այլ կազմատված կառուցվածքներ: Զգալի ծավալ են կազմում ինքնակամ կառուցված շինություններ, որոնք ենթակա չեն օրինականացման քաղաքաշինական նորմերին չհամապատասխանելու պատճառով, ինչպես նաև երկրաշարժին քանդված շենք-շինությունների հիմքեր, կազմատված պիտանելիությունը կորցրած տարրեր, լուծարված հիմնարկ ձեռնարկությունների կիսաքանդ տիրազուրկ կառույցներ:

Բոլոր վերոգրյալ շենք-շինությունները և կառուցվածքները հիմնականում որևէ արժեք չեն ներկայացնում և ենթակա են քանդման:

Կառուցապատման առաջարկություն ներկայացնող կողմերը պատրաստ են սեփական միջոցներով իրականացնել քանդման աշխատանքները, ազատել հողամասերը և իրականացնել շինարարական աշխատանքներ: Համայնքն այս դեպքում տնտեսում է զգալի միջոցներ, միաժամանակ ապահովելով քաղաքի քաղաքաշինական ու կառուցապատման հաջորդականությունը և ամբողջականությունը:

Պետական գրանցման պահանջներն ու կառուցապատման հարցադրումները փոխհամաձայնեցված իրագործելու համար, անշարժ գույքի կադաստրի Գյումրու ստորաբաժանումը և քաղաքապետարանը եկել են համաձայնության, որ քանդման ենթակա քաղաքաշինական նորմերի պահանջներին չբավարարող, վքարային և ժամանակավոր շինություններով ծանրաբեռնված առանձնացվող հողամասերը ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» N 731-Ն որոշման, շինություններին տալով հողամասում ինքնակամ կառուցված քանդման ենթակա գույքի կարգավիճակ:

Հաշվի առնելով, որ վերոգրյալ մոտեցումները զգալիորեն նպաստելու են 1988թվականի երկրաշարժի հետևանքների վերացմանը, և այդ գործում մասնավոր ներդրումների ներգրավմանը, համաձայն Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի 5-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի, 32-րդ հոդվածի 12-րդ կետի, 37-րդ հոդվածի 6-րդ կետի, 38-րդ հոդվածի 2-րդ կետի և 48-րդ հոդվածի՝

## *ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Ժամանակավոր տնակ-կացարաններով, պարիսպներով, այլ ոչ կապիտալ և տեխնիկական-շինարարական նորմերի պահանջներին չբավարարող, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին հակասող՝ պետական գրանցում չունեցող շենք-շինությունների և կառուցվածքներով ծանրաբեռնված հողամասերի առանձնացման ժամանակ շենք-շինություններով քանդման ենթակա լինելու մասին եզրակացությունը տրվում է քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետական և աշխատակազմի քաղաքաշինության, շինարարության և անշարժ գույքի կադաստրի բաժինների կողմից:
2. Քանդման ենթակա շենք-շինություններով ծանրաբեռնված հողամասերի համայնքային սեփականության գրանցման կարգավիճակը սահմանել որպես ինքնակամ, քանդման ենթակա գույք: Գույքի չափագրումը կատարել գույքի արտաքին պարագծի տվյալներով:
3. Քանդման ենթակա շենք-շինություններով և կառուցվածքներով ծանրաբեռնված հողամասը կառուցապատման նպատակով աճուրդային եղանակով, ուղղակի վաճառքով, նվիրաբերությամբ կամ նվիրատվությամբ օտարելիս, հողամասերի սեփականության իրավունքով օտարման վերաբերյալ որոշումներում, ինչպես նաև օտարման առաջարկ-հայտարարությունները և պայմանագրերում պարտադիր նշել հատուկ պայմաններ կառուցապատողի կողմից քանդման ենթակա շենք-շինությունների քանդման կարգի, ժամկետների և պարտավորությունների չկատարման համար ներազդման միջոցառումներ:
4. Խնդրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գյումրու տարածքային ստորաբաժանմանը իրականացնել պետական գրանցման գործարքները սույն որոշման դրույթներին համապատասխան:

***ԿՈՂՄ – միաձայն***
***ԴԵՄ –***

### *12. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՏԵՂԱՇԱՐԺ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

---

*Մ.Գրիգորյան, Վ.Ղուկասյան*

Հաշվի առնելով լրացուցիչ կատարվող ծախսերի և բյուջեում կատարվող տեղաշարժերի անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով՝

### *Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝*

Գյումրու քաղաքային համայնքի 2011թվականի բյուջեի ծախսային մասում կատարել տեղաշարժ՝ 10-4-1գործառնական դասակարգման 4729 հոդվածից՝ 15000.0 հազ.դրամ, 6-4-1 գործառնական դասակարգման 4212 հոդվածից՝ 5000.0 հազ.դրամ,8-1-1գործառնական դասակարգման 4511 հոդվածից՝ 10000.0 հազ.դրամ և 8-2-3գործառնական դասակարգման 4511 հոդվածից՝ 12000.0 հազ. դրամ,9-1-1 գործառնական դասակարգման 4511 հոդվածին՝ 40000.0 հազ.դրամ և 8-1-1 գործառնական դասակարգման 4221 հոդվածին՝ 2000.0 հազ.դրամ:

***ԿՈՂՄ – միաձայն***
***ԴԵՄ –***

### *13. «ՀԱՅԱՍՏԱՆ » ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

---

*Մ.Գրիգորյան, Վ.Ղուկասյան*

Գյումրու քաղաքապետին է դիմել «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյանը հայ ժողովրդի համար ու ռազմավարական նշանակության ծրագրերի իրականացման համար դրամական միջոցներ տրամադրելու խնդրանքով :

Հաշվի առնելով հարցի դերն ու կարևորությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝

### *ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

«Հայաստան» համահայկական հիմնադրամին քաղաքապետարանի բյուջեի այլ ծախսերից հատկացնել 1000000 /մեկ միլիոն դրամ/՝ այն փոխանցելով ՀՀ Կենտրոնական բանկ SWIFT: CBRAAM 22 103003215672 հաշվեհամարին:

***ԿՈՂՄ – միաձայն***
***ԴԵՄ –***

### *14. ԳՅՈՒՄՐՈՒ «ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ » ՀՈԱԿ-ԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱԿՏԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

---

*Մ.Գրիգորյան, Վ.Ղուկասյան*

Գյումրու քաղաքապետին է դիմել Գյումրու քաղաքապետարանի «Համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն Ա.Կարապետյանը դրամական օգնություն հատկացնելու խնդրանքով՝ շարքից դուրս է եկել լողավազանի հիմնական աշխատող ջերմափոխանակիչը, կրակայրիչը, ջերմամղիչ սարքը /նասոսը/, որոնք ենթակա են փոփոխման, իսկ մարզադպրոցը դրա հնարավորությունը չունի:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5րդ կետով՝

### *ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

Գյումրու քաղաքապետարանի «Համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ին քաղաքապետարանի բյուջեի այլ ծախսերից հատկացնել 1000000 /մեկ միլիոն/ դրամ, այն փոխանցելով Արդշին բանկում ունեցած 247260127979 հաշվեհամարին:

*ԿՈՂՄ – միաձայն*
*ԴԵՄ –*

### *15. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՊԱՐԻ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

---

*Մ.Գրիգորյան, Վ.Ղուկասյան*

Գյումրու քաղաքապետին է դիմել քաղաքապետարանի «Պարի և սպորտային պարերի մասնագիտացված դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն Մ.Մամյանը դրամական օգնություն հատկացնելու խնդրանքով՝ դպրոցն ունի շնորհալի սաներ, որոնք հրաշալի կերպով ներկայացնում են պարը և սպորտային պարը իր ուրույն գեղեցկությամբ: Եվ այդ ամենը գեղեցիկ մատուցելու համար դպրոցի սաներին անհրաժեշտ է զգեստների մեծ հավաքածու, որպեսզի ավելի վառ կերպով ներկայացվի հայկական հեզաճկուն, գնչուական վառվռուն, իսպանական կրակոտ, լատինա-ամերիկյան կրքոտ պարերը:
Հաշվի առնելով հարցի կարևորությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝

### *Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Է՝*

Գյումրու քաղաքապետարանի «Պարի և սպորտային պարերի մասնագիտացված դպրոց» ՀՈԱԿ-ին քաղաքապետարանի բյուջեի այլ ծախսերից անկանխիկ հատկացնել դրամական օգնություն 1000000 /մեկ միլիոն/ դրամ գումար՝ այն փոխանցելով Արդշին բանկում ունեցած 2472600722580010 հաշվեհամարին:

*ԿՈՂՄ – միաձայն*
*ԴԵՄ –*

### *16. ԺԻԼԲԵՐՏ ՄԱՆՎԵԼՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

---

*Մ.Գրիգորյան, Վ.Ղուկասյան*

Գյումրու քաղաքապետին է դիմել Ժիլբերտ Մանվելյանը դրամական օգնություն ստանալու խնդրանքով, որը գտնվում է սոցիալապես վատ պայմաններում և ի վիճակի չէ վճարելու ուսման վճարը:
Հաշվի առնելով քաղաքացու սոցիալապես ծանր վիճակը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝

### *Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Է՝*

Ժիլբերտ Մանվելյանին Գյումրու քաղաքապետարանի բյուջեի այլ ծախսերից անկանխիկ հատկացնել 70000 /յոթանասուն հազար /դրամ օգնություն այն փոխանցելով «Ֆես Հաուզ» կրթության միջազգային կենտրոնին, Պրո Կրեդիտ Բանկ ՓԲԸ 2530100371950010 հաշվեհամարին:

*ԿՈՂՄ – միաձայն*
*ԴԵՄ –*

### *17. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 18 ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

---

*Մ.Գրիգորյան, Վ.Ղուկասյան*

Գյումրու քաղաքապետին են դիմել սոցիալապես անապահով՝ թվով 18 անձիք դրամական օգնություն ստանալու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով դիմումները՝

*Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Է՝*

Թվով 18 անձանց՝ ցուցակը համաձայն հավելվածի, Գյումրու քաղաքապետարանի բյուջեի այլ ծախսերից կանխիկ հատկացնել ընդամենը 1365000 /մեկ միլիոն երեք հարյուր վաթսունհինգ հազար/ դրամ օգնություն:

*ԿՈՂՄ – միաձայն*
*ԴԵՄ –*

### *18. «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

---

*Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան*

«Հայկական Կարիտաս» բարեգործական հասարակական կազմակերպությունը 2011թվականի նոյեմբերի 1-ի **N AC-176-11** գրությամբ դիմել է Գյումրու քաղաքապետին, կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի գործունեության շրջանակներն ընդլայնելու և բոլոր տարիքային խմբերի հաշմանդամների հանգիստը կամակերպելու նպատակով, այգի-պուրակ, հանգստի գոտի, կոմունալ շենքեր և այլ օժանդակ շինությունների կառուցման համար Գյումրու համայնքի հողերից առանձնացված Պ.Սևակի փողոցի 23 հասցեի 25500.0քառ.մ մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով կազմակերպությանը օտարելու խնդրանքով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286-Ն որոշման 20-րդ կետի ա) ենթակետի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝

*Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Է՝*

1. Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող Պ.Սևակի փողոցի 23 հասցեի 25500.0 քառ.մ մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարել «Հայկական Կարիտաս» բարեգործական հասարակական կազմակերպությանը:
2. 25500.0քառ.մ հողամասի օտարման գին սահմանել 24 990 000 (քսանչորս միլիոն ինը հարյուր իննսուն հազար) դրամ:
3. Հողամասերի առուվաճառքի հետ կապված ծախսերը կատարել «Հայկական Կարիտաս» բարեգործական հասարակական կազմակերպության հաշվին:

*ԿՈՂՄ – միաձայն*
*ԴԵՄ –*

### *19. ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Մ.ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻ N 33/11 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

---

*Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան*

«Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությունը, ալեհավաք աշտարակ կայանի տեղադրման համար պահանջվող սպասարկման գոտին ապահովելու համար, դիմել է Գյումրու քաղաքապետին, Ա.Խաչատրյան փողոցի N 4/12 հասցեի 100.0քառ.մ մակերեսով հողամասը (սեփականության վկայական **2836671**) փոխանակելու Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող Մ.Խորենացի փողոցի N 33/11 հասցեի 200.0քառ.մ մակերեսով հողամասի հետ, լրացուցիչ 100.0քառ.մ հողամասի արժեքը վճարելու պայմանով, քանի որ փոխանակվող հողամասերը գտնվում են տարբեր գոտիներում:

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 71-րդ հոդվածի 3-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-հոդվածի 20-րդ կետի՝

***Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Է՝***

1. Թույլատրել Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող Մ.Խորենացի փողոցի N 33/11 հասցեի 200.0քառ.մ հողամասը փոխանակել «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Ա.Խաչատրյան փողոցի N 4/12 հասցեի 100.0քառ.մ մակերեսով հողամասի հետ և սահմանված կարգով կնքել հողամասերի փոխանակության պայմանագիր:
2. Փոխանակվող 200.0քառ.մ հողամասի ավել 100.0քառ.մ համար օտարման գին սահմանել 320000 (երեք հարյուր քսան հազար դրամ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հողամասի փոխանակության հետ կապված ծախսերը կատարել «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության հաշվին:

***ԿՈՂՄ – միաձայն***
***ԴԵՄ –***

### *20. «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ-ԻՆ ԱԼԵՀԱՎԱՔ ԱՇՏԱՐԱԿՆԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

***Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան***

«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ն դիմել է Գյումրու քաղաքապետարան՝ ալեհավաք աշտարակ կայանների տեղադրման համար:

Գյումրու ավագանին և քաղաքապետարանը կարևորում են բջջային կապի զարգացման համար ընկերության ծրագրերը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 66-րդ հոդվածի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286-Ն որոշմամբ հաստատված կարգի 20-րդ կետի ա) ենթակետով՝

***Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Է՝***

1. Թույլատրել «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ին ուղղակի վաճառքի միջոցով օտարել Գերցեն փողոց N 1/31 հասցեով 400.0քմ մակերեսով հողամասը:
2. Գերցեն փողոց N 1/31 հասցեի 400.0քմ մակերեսով հողամասի համար օտարման գին սահմանել 1 200 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ:
3. Հողամասերի առուվաճառքի հետ կապված ծախսերը կատարել «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հաշվին:

***ԿՈՂՄ – միաձայն***
***ԴԵՄ –***

### *21. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԶԻԼ ՄՄԶ-4502» ՄԱԿՆԻՇԻ ԲԵՌՆԱՏԱՐ ԻՆՔՆԱԹԱՓ ՄԵՔԵՆԱՅԻ ԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱԿՏԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

***Հովի.Գրքիկյան, Վ.Ղուկասյան***

Գյումրու քաղաքապետարանի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել գնելու «ԶԻԼ ՄՄԶ-4502» մակնիշի բեռնատար ինքնաթափ մեքենա:

Հիմք ընդունելով «Գազեմա» ՍՊԸ-ի կողմից տրված «ԶԻԼ ՄՄԶ-4502» մակնիշի ավտոմեքենայի գնահատման 2011թվականի հոկտեմբերի 24-ի N 81 հաշվետվությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ կետերով և 54-րդ հոդվածով՝

***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1. Գյումրու քաղաքապետարանի կարիքների համար անհրաժեշտ «ԶԻԼ ՄՄԶ-4502» մակնիշի բեռնատար ինքնաթափ մեքենայի գնման համար համայնքի 2011թվականի բյուջեի ֆոնդային մասից /տրանսպորտային միջոցի ձեռքբերում/ հատկացնել 3 000 000 /երեք միլիոն/ Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնին՝ /Հովհ.Գրքիկյան/ իրականացնել մեքենայի ընդունման գործընթացը:

***ԿՈՂՄ – միաձայն***
***ԴԵՄ –***

### *22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏՈՒՀԻ ՖԼՈՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏՎԱՎՈՐ «ՎԱՐՊԵՏ» ՈՍԿՅԱ ԿՐԾՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ա.Կարապետյան, Վ.Ղուկասյան*

Ֆլորա Արտաշեսի Մարտիրոսյանը ծնվել է 1957թվականին փետրվարի 5-ին, Գյումրիում:

1964-1971թթ. սովորել է Ն.Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցում,

1974-1978թթ. սովորել է Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանում,

1976-1991թթ. որպես մենակատար-երգչուհի աշխատել է Հայաստանի պետական ժող.գործիքների անսամբլում,

1981-1986թթ. սովորել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում /ժողովրդական բաժնում/,

1997-2001թթ. նշանակվել է Արմեն Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի տնօրեն,

2002-2008թթ. հիմնադիրն ու ղեկավարն է եղել /ԱՄՆ/ Լոս-Անջելեսի Բրբանկ և Հոլիվուդ քաղաքների Կոմիտասի անվան երաժշտական դպրոցների,

100-ից ավել մենահամերգներով հանդես է եկել Երևանում, Հայաստանի գրեթե բոլոր մարզերում և աշխարհի 50-ից ավելի երկրներում /Ֆրանսիա, Գերմանիա, Ավստրիա, Անգլիա, Քուվեյթ, Հորդանան, Սիրիա, Հունաստան, Ավստրալիա, Հնդկաստան, Ամերիկայի միացյալ Նահանգներ, Ռուսաստան և այլն/:

Բազմաթիվ բարեգործական համերգներով հանդես է եկել Արցախի և Հայաստանի, ինչպես նաև գաղթօջախների մանկատներում, ծերանոցներում, դպրոցներում և այլ հասարակական կազմակերպություններում:

2006-2007թթ. Հայաստանում նախաձեռնել և անց է կացրել Կոմիտաս համահայկական միջազգային մրցույթը, որին իրենց մասնակցությունն են ունեցել Հայաստանից և տարբեր երկրներից շուրջ 2000 հայ երեխա:

2007թ-ից առայսօր Ֆ.Մարտիրոսյանը ձեռնամուխ է եղել «Այլևս երբեք» նախագծի իրականացմանը, որի նպատակն է համախմբել բոլոր նրանց ովքեր անհանգստանում են իրենց ու իրենց սերունդների համար, առաջնահերթ այս ծրագիրը մեկ նպատակ ունի՝ իր շուրջ համախմբել աշխարհի արվեստագետներին, նրանց իսկ դարձնելով հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի մասնակից:

Ունի 4 երաժշտական ալբոմ:

Ունի բազմաթիվ մրցանակներ և պատվոգրեր /1972թ. Կուբա-Ֆրանսիա-Մարոկկո փառատոնի մասնակցության համար, 1973թ. Արամ Մերանգուլյանի անվան ժող.գործիքների անսամբլի կազմակերպած «Գարուն-73» մրցույթում 1-ի տեղ, 2009թ. Մոսկվայում կայացած «Տաշիր» մրցանակաբաշխությունից, 2010թ. «Կարոտ» փառատոն, 2005թ.ին ՀՀ ազգային մրցանակաբաշխության ժամանակ ստացել է տարվա լավագույն դուետ նոմինացիայի մրցանակը/:

Հայ ժողովրդական երգը հայրենիքում և արտերկրում լավագույնս ներկայացնելու գործում ունեցած մեծ ավանդի համար և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով և հիմք ընդունելով Գյումրու ավագանու 2003թվականի սեպտեմբերի 11-ի ««Վարպետ» կրծքանշանով պարգևատրելու կարգը հաստատելու մասին» N 5 որոշումը՝

### *ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝*

Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստուհի Ֆլորա Մարտիրոսյանին պարգևատրել պատվավոր «ՎԱՐՊԵՏ» ոսկյա կրծքանշանով:

***ԿՈՂՄ – միաձայն***
***ԴԵՄ –***

## *23. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

---

***Բ.Ալեքսանով, Վ.Ղուկասյան***

«Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝

### *ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝*

1. Հաստատել՝

1) Հանրային հավաքների անցկացման իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հանրային հավաքների անցկացման իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

***ԿՈՂՄ – միաձայն***
***ԴԵՄ –***